Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հոկտեմբերի 18-ի N 736- Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկեպար, Այգեպար և Պառավաքար համայնքների բնակիչների և մանկապարտեզների համար արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ /ԱՋՏ/ համակարգերի տեղադրման աշխատանքները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /իրավաբանական և ֆիզիկական անձինք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 36.795.246,00 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկեպար, Այգեպար և Պառավաքար համայնքների բնակիչներ և մանկապարտեզներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 2019 թ. նոյեմբերի 29-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 2019 թ. նոյեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզի Ոսկեպար, Այգեպար և Պառավաքար համայնքներում նախատեսվում է տեղադրել արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ /ԱՋՏ/ համակարգեր: Արժեքը՝ 36.795.246,00 դրամ

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանք-ների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատես-վող գինը	«Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ /ԱՋՏ/ համակարգերի տեղադրումը՝ 36.795.246,00 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակեր-պությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատ-մամբ վերահսկողության մեխանիզմ-ների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշ-մամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ